ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի և Կարեն Սարդարյանի,

քննության առնելով Պալատի 2023 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացված անկախ աուդիտորական եզրակացությունը հաստատելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի 02.02.2024թ. թիվ 2/14-Լ որոշմամբ Պալատի 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնելու համար որպես անկախ աուդիտ ընտրվել էր «Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊ ընկերությունը, որը կատարված ուսումնասիրությունների արդյունքում 26.04.2024թ. ներկայացրել է անկախ աուդիտորական եզրակացություն,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 կետի 4-րդ ենթակետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել Պալատի 2023 թվականի ֆինանսական գործունեության աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնող «Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊ ընկերության 26.04.2024թ. անկախ աուդիտորական եզրակացությունը:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

30 ապրիլի 2024թ.
թիվ 7/9-Լ
ք. Երևան